«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ 3

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

3. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 4

4. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ 5

5. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ6

6. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 7

7. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 8

8. ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

9. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՇԱՀԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 9

10. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10

11. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 12

1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Արժեթղթերի շուկայում խորհրդատվական ծառայությունների մատուցման կանոնները (այսուհետ Կանոններ) մշակվել է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1.2. Սույն կանոնները կարգավորում են Բանկի կողմից Հաճախորդներին՝ արժեթղթերի շուկայում ներդրումների հետ կապված խորհրդատվական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները:

1.3. Սույն կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ և արժեթղթերի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1.4. Բանկը խորհրդատվական ծառայությունները մատուցում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, սույն կանոնների և խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված կարգին համաձայն:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

2.1. **«Խորհրդատվական ծառայություն».**

- խորհրդատվության տրամադրում թողարկողներին՝ արժեթղթերի գնահատման և արժեթղթերի շուկայում ներդրումների ներգրավման հարցերով,
- խորհրդատվության տրամադտրում ներդրողներին՝ արժեթղթերում ներդրումներ կատարելու վերաբերյալ,
- խորհրդատվության տրամադրում ընկերությունների կողմից արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, օտարման և հետգնման վերաբերյալ,
- խորհրդատվության տրամադրում ընկերությունների կապիտալի կառուցվածքի վերաբերյալ,
- խորհրդատվության տրամադրում ընկերությունների կորպորատիվ քաղաքականության հարցերի վերաբերյալ,
- խորհրդատվության տրամադրում ընկերությունների վերակազմակերպման հարցերի վերաբերյալ,
- արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների նյութերի կազմում և տարածում:

2.2 **«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջներ».** ներդրումային ծառայությունների մատուցման կանոնները և պահանջները, ներդրումային

ծառայությունների առանձին տեսակների մատուցման սահմանափակումները և դրանց մատուցման հատուկ կարգը, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից հաճախորդներին տրամադրման ենթակա տեղեկությունների, հաշվետվությունների և նման այլ փաստաթղթերի կազմի, ձևի, բովանդակության և տրամադրման կարգի նկատմամբ մանրամասն պահանջները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից բացառությունները, ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերին ներկայացվող պարտադիր պահանջները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված պահանջների կատարման մանրամասն չափանիշները.

2.3. **«Օրենք».** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք;

2.4. **«Կանոնակարգ».** ՀՀ կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/07, «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները»

2.5. **«Ներդրումային ծառայություններ մատուցող անձ»**. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանում;

2.6. **«Հաճախորդ»**. Ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն օգտվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի ծառայություններից, կամ որը դիմել է ներդրումային ծառայություններ մատուցող անձին այդ ծառայությունից օգտվելու նպատակով;

2.7. **«Պատասխանատու աշխատակից».** Ներդրումային ծառայություններ մատուցող անձի համապատասխան որակավորում ունեցող աշխատակից, որը Հաճախորդի հետ կնքված պայմանագրի հիման վրա իրականացնում է Արժեթղթերի շուկայում խորհրդատվական ծառայությունների մատուցման գործառնություններ;

2.8. **«Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց».** ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել Բանկի կողմից անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:

2.9. «**Ներդրումային առաջարկություն».** արժեթղթերում ներդրումների որոշակի ռազմավարություն ընտրելու խորհուրդ կամ առաջարկ պարունակող գրավոր կամ բանավոր հետազոտությունը կամ այլ տեղեկատվությունը, որն իրականացվում է հրապարակման կամ այլ միջոցներով հանրությանը կամ անձանց անորոշ շրջանակին հայտնի դարձնելու նպատակով:

2.10. **«Պայմանագիր».** խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր:

2.11. **«Հաշվետվություն».**, պատասխանատու աշխատակցի կողմից պատրաստված և խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ պայմանավորված տեղեկատվություն, որին ներդրողը կցանկանար տիրապետել ներդրումային որոշումներ կայացնելու հարցում կողմնորոշվելու համար, կամ այն տեղեկատվությունը, որը հավանական է, որ կարող է ազդեցություն ունենալ արժեթղթերի շուկայական գնի վրա:

3. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

3.1. Արժեթղթերի շուկայում խորհրդատվական ծառայությունները մատուցվում են Պայմանագրի հիման վրա:

3.2. Մինչ Պայմանագրի կնքումը՝ Ներդրումային ծառայություններ մատուցող անձը Հաճախորդին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին և ներքին կանոններին:

3.3. Պայմանագիրն առնվազն պետք է ներառի `

3.3.1. խորհրդատվական ծառայությունների մատուցման առարկան և նպատակը;

3.3.2. կողմերի իրավունքներն ու պարտականությունները ;

3.3.3. ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը ;

3.3.4. հաշվետվությունների բովանդակային ընդհանուր նկարագիրը;

3.3.5. հաճախորդներին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը ;

3.3.6. հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ ;

3.3.7. Պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը;

3.3.8. կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը;

3.3.9. Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ հաճախորդի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով;

3.3.10. Պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը;

3.3.11. շահերի բախման կառավարման դրույթներ;

3.3.12. Օրենքով և Կանոնակարգով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ ;

3.4 Ի լրումն վերը նշված տեղեկատվության, Պայմանագիրը կարող է պարունակել նաև ՀՀ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին և Բանկի ներքին կանոններին ու կանոնակարգերին չհակասող այլ դրույթներ:

3.5 Պայմանագրով չնախատեսված խորհրդատվական ծառայությունների մատուցման անհրաժեշտության դեպքում, Հաճախորդը պետք է ներկայացնի առանձին հանձնարարական, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Բանկը կարող է Հաճախորդին խորհրդատվական ծառայություններ մատուցել՝ կիրառելով Հաճախորդի համար նախընտրելի կապի հուսալի միջոցներ, այդ թվում՝

- թղթային (ներառյալ փոստային փոխանցմամբ);
- էլեկտրոնային կապի միջոցներով;

- ֆաքսիմիլային կապի միջոցով;
- հեռախոսով՝ տեխնիկական հագեցվածության պայմաններին համապատասխան (հեռախոսային խոսակցությունները պետք է պատշաճ կերպով ձայնագրվեն, մասնավորապես պետք է ձայնագրվի խորհրդատվական ծառայությունների մատուցման փաստը և բովանդակությունը):

4.2. Բանկը խորհրդատվական ծառայությունները մատուցում է Հաճախորդի ներկայացրած տեղեկությունների և փաստաթղթերի հիման վրա:

4.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված ոչ ճշգրիտ տեղեկությունների հիման վրա տրված խորհուրդների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

4.4. Բանկը պատասխանատվություն չի կրում իր տված խորհուրդները Հաճախորդի կողմից չկատարելու կամ մասնակիորեն կամ ոչ լիարժեք կատարելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

4.5. Բանկը պատասխանատվություն և վնասի հատուցնման որևէ պարտավորություն չի կրում շուկայական իրավիճակի անբարենպաստ փոփոխության, թողարկող(ներ)ի ֆինանսական վիճակի և նմանատիպ այլ պատճառներով հաճախորդի կրած վնասների համար:

5. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվական ծառայություններ մատուցելիս Բանկն առաջնորդվում է հետևյալ հիմնական սկզբունքներով՝

- Բանկի պատասխանատու աշխատակիցները պետք է մշտապես պահպանեն պրոֆեսիոնալ էթիկայի կանոնները և հաճախորդների հետ իրենց հարաբերությունների ընթացքում չշահարկեն և չվնասեն նրանց, Բանկի, Բանկի այլ հաճախորդների, ինչպես նաև ներդրումային հատվածի մյուս պրոֆեսիոնալ մասնակիցների գործարար համբավն ու հեղինակությունը:
  - արժեթղթերում ներդրումներ կատարելու մասով՝ Պատասխանատու աշխատակիցները պետք է բացահայտեն Հաճախորդի ռիսկն իր վրա ընդունելու ցանկությունը, նպաստեն նրա եկամուտների աճին;
  - կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման մասով՝ Պատասխանատու աշխատակիցները պետք է նպաստեն բաժնետերերի կարողության աճին;
  - արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմման և տարածման հարցերի մասով՝ Պատասխանատու աշխատակիցները պետք է ապահովեն հնարավորինս ամբողջական և համալիր մոտեցում, տրամադրեն գնահատականների և կանխատեսումների առումով իրատեսական և անաչառ վերլուծություններ:

6. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձը, ի դեմս պատասխանատու աշխատակցի, նախքան Պայմանագիր կնքելը, Հաճախորդին ներկայացնում է հետևյալ տեղեկատվությունը՝

6.1. Բանկի մասին ընդհանուր տեղեկություններ: Հաճախորդին ներկայացվում է Բանկի անվանումը, կապի միջոցները, ներդրումային ծառայության մատուցման հիմքերը, լիցենզավորող իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները:

6.2. Բանկի և Հաճախորդի միջև հաղորդակցման հաստատման և տեղեկատվության փոխանակման մեթոդների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվում է հաղորդակցման լեզուները, տեղեկատվության փոխանցման մեթոդները, պատվերների ընդունման և հաղորդման կարգը, տեղեկատվություն հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին և այլն:

6.3. Շահերի բախումները կանխարգելող միջոցառումների համառոտ նկարագիրը: Հաճախորդի պահանջով կարող է տրամադրվել բանկի կողմից հաստատված ամբողջ կարգը:

6.4. Արժեթղթերի մասին տեղեկատվություն, մասնավորապես՝

- Արժեթղթերի և դրանում ներդրումների հետ կապված ռիսկերի նկարագիր: Այդ նկարագրով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր տեսակի (բաժնետոմս, պարտատոմս և այլն) արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը:
- Այդ պահին հրապարակային առաջարկի առարկա հանդիսացող արժեթղթերի մասին: Այս դեպքում բանկը հաճախորդին տեղեկացնում է, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:
- Այն դեպքերում, երբ արժեթղթերում ներդրումները երաշխավորված են երրորդ անձի կողմից, բանկը հաճախորդին ներկայացնում է տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին: Բանկ պետք է հաճախորդին տեղեկացնի նաև, որ արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

6.5. Վճարվելիք գումարների մասին տեղեկատվություն: Մասնավորապես՝

- վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Բանկի կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա պետք է ներկայացվի հաշվարկման կարգը:
- եթե նախորդ ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը.
- վճարումներ կատարելու եղանակները:

Պրոֆեսիոնալ հաճախորդի դեպքում վերը նշված տեղեկատվության տրամադրումը պարտադիր չէ :

6.6. Բանկի կողմից հաճախորդներին տրամադրվող ողջ տեղեկատվության որակական հատկանիշների ԿԲ պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Բանկը ապահովում է, որ տեղեկատվությունը՝

- հասկանալի լինի ներդրումների բնագավառում միջին մակարդակի գիտելիքներ և փորձ ունեցող մարդկանց համար,
- չներկայացվի այնպես, որ թաքցվեն կարևոր դրույթները կամ նախազգուշացումները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են.
- ներկայացվի ծառայությունների մատուցման արդյունքում իրականացվելիք ներդրումային գործունեությունից սպասվող օգուտները, ինչպես նաև դրանց համապատասխան ռիսկերը:

6.7. Բանկն ապահովում է որպեսզի իր կողմից Հաճախորդին տրամադրվող ողջ տեղեկատվության որակական հատկանիշները համապատասխանեն Կանոնակարգի Գլուխ 3-ի չափանիշներին:

7. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

7.1. Արժեթղթերի շուկայում խորհրդատվության տրամադրման ծառայության մատուցման դեպքում պատասխանատու աշխատակիցը Հաճախորդից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի (տես Հավելված 1), նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին (տես Հավելված 2), որը հնարավորություն կտա Բանկին գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին, թե ոչ: Ներդրումային ծառայություններ մատուցող անձը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք: Նշված տեղեկատվությունը չստանալու դեպքում պատասխանատու աշխատակիցը իրավունք չունի Հաճախորդին հորդորել որևէ արժեթղթում ներդրում կատարել:

7.2. Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում «գիտելիքների և փորձի մասին» և «ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին» տեղեկանքը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա պատասխանատու աշխատակիցը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

7.3. Զգուշացումը պատասխանատու աշխատակցի կողմից Հաճախորդին ներկայացվում է գրավոր կամ այլ տարբերակով, ինչը հետագայում հնարավորություն կտա փաստել զգուշացման հանգամանքը:

7.4. «Գիտելիքների և փորձի մասին» և «ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին» տեղեկանքները ներկայացնելուց հետո պատասխանատու աշխատակիցը որոշում է, թե արդյո՞ք Հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Բանկի գնահատականը տրամադրվում է Հաճախորդին (Տես Հավելված 1 և 2):

7.5. Բանկն իրավասու է օգտագործել հաճախորդի ներկայացված տեղեկությունները՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների ապահովման նպատակով:

7.6. Հաճախորդն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխել «Գիտելիքների և փորձի մասին» և «Ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին» տեղեկանքները:

7.7. Տեղեկանքի կրկնակի ներկայացում չի պահանջվում այն դեպքում, եթե Հաճախորդը նախկինում ներկայացրել է այն Բանկի ներդրումային այլ ծառայություններից օգտվելու համար:

8. ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Պատասխանատու անձին արգելվում է Հաճախորդին խորհուրդ տալ գործարք կնքելու՝ նախապես իմանալով, որ տվյալ գործարքի կնքումը չի բխում հաճախորդի շահերից, կամ տվյալ գործարքը կնքվում է Օրենքի իմաստով գնային չարաշահումների նպատակով,

8.2. գնային չարաշահում է համարվում՝

8.2.1. այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, դրա նկատմամբ պահանջարկի կամ առաջարկի ծավալի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծմանը կամ ազդակների հաղորդմանը, բացառությամբ Օրենքով նախատեսվող դեպքերի;

8.2.2. այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը հանգեցնում է արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արժեթղթի գնի արհեստական մակարդակի սահմանմանը, բացառությամբ Օրենքով նախատեսվող դեպքերի;

8.2.3. այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որն իրականացվում է կեղծ, անբարեխիղճ կամ թյուրիմացություն առաջացնող եւ (կամ) ապակողմնորոշիչ մեխանիզմների գործադրմամբ ;

8.2.4. այնպիսի տեղեկությունների տարածումը, որոնք սխալ կամ ապակողմնորոշիչ ազդակներ են հաղորդում շուկայի մասնակիցներին արժեթղթերի գների վերաբերյալ, այդ թվում՝ տվյալ արժեթղթի մասին խեղաթյուրված տեղեկությունների տարածումը, եթե այդ տեղեկությունները տարածող անձը գիտեր կամ բավարար ուշադրություն ցուցաբերելու դեպքում կարող էր իմանալ դրանց՝ իրականությանը չհամապատասխանելու փաստի մասին ;

8.2.5. 8.2.1-8.2.4 կետերում նշված գործողություններ չհանդիսացող, սակայն նույնաբնույթ գործողությունները:

8.3. Պատասխանատու անձին, նրա ղեկավարներին և աշխատակիցներին, արժեթղթերով գործարքների հանձնարարականներ կատարող այլ անձանց, արժեթղթերի շուկայում վերլուծություններ իրականացնող կամ ներդրումային առաջարկություններ կազմող և (կամ) տարածող անձանց Օրենքի իմաստով շուկայի չարաշահումներ իրականացնելը:

8.4. Պատասխանատու անձին արգելվում է Օրենքի իմաստով ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը:

9. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՇԱՀԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9.1. Բանկի կողմից տրամադրվող ներդրումային առաջարկությունների և տեղեկատվության մատուցումը և դրա գաղտնիությունը պետք է համապատասխանի Բանկի «Արժեթղթերի շուկայում իրականացվող գործարքների արդյունքում հնարավոր շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման» կարգին:

9.2. Արժեթղթերով խորհրդատվական ծառայությունների մատուցման ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը ապահովում է, որ Հաճախորդի շահերը գերակայեն Բանկի շահերի նկատմամբ:

9.3. Բանկի պատասխանատու աշխատակիցներին արգելվում է Հաճախորդի փորձին և գիտելիքներին անհարիր, չհիմնավորված և շահադիտական նկատառումներով ներդրումային առաջարկությունների տրամադրումը:

9.4. Պատասխանատու աշխատակիցներին արգելվում է միևնույն արժեթղթին առնչվող որոշակի տեղեկատվության վերաբերյալ տարբեր հաճախորդներին տրամադրել տարբեր առաջարկություններ, հակառակ դեպքում նման տարբերությունները պետք է մեկնաբանվեն Բանկի կողմից և համալրվեն այն չափով, որը կապահովի սպասարկման համարժեք չափորոշիչներ:

9.5. Պատասխանատու աշխատակիցը պետք է գործադրի լավագույն ջանքերը, ապահովելու համար՝ արժեթղթերի վերաբերյալ առաջարկությունների, մասնագիտական կարծիքի կամ գնահատականների փոփոխության դեպքերում տվյալ ծառայությունից օգտվող Բանկի բոլոր հաճախորդներին համահավասար կերպով այդ փոփոխության մասին տեղեկացումը:

9.6. Արգելվում է պատասխանատու աշխատակցի կողմից՝ Բանկի վերլուծական նյութերի հետ Հաճախորդների ընտրանքային ծանոթացումը կամ տեղեկացումը, եթե դրանից հրաժարվելու մասով առկա չեն Հաճախորդի կողմից տրամադրված համապատասխան հիմքեր: Միևնույն ծառայություններից օգտվող Հաճախորդների համար պետք է ապահովվեն տեղեկացված լինելու միևնույն հնարավորությունները:

10. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Բանկը կարող է իրականացնել արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտություններ, արժեթղթերի շուկայի վերաբերյալ ֆինանսական վերլուծություններ և կազմել այլ ընդհանուր ներդրումային առաջարկություններ՝ ինչպես Հաճախորդի պատվերով, այնպես էլ իր նախաձեռնությամբ՝ հետագայում դրանք տրամադրելով իր Հաճախորդներին, կամ հրապարակելով իր ինտերնետային կայքում կամ այլ կերպ:

10.2. Հաճախորդի պատվերով կատարված արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունները, արժեթղթերի շուկայի վերաբերյալ ֆինանսական վերլուծությունները և կազմված ներդրումային առաջարկությունները կարող են տրամադրվել միայն տվյալ Հաճախորդին:

10.3. Պատասխանատու աշխատակիցը պարտավոր է իր կողմից արժեթղթերի և այլ ներդրումային գործիքների վերաբերյալ ներկայացված «գնել», «պահել» և «վաճառել» առաջարկությունները հիմնավորել, ներկայացնել դրանց գործողության ժամկետը կամ ժամանակաշրջանը:

10.4. Պատասխանատու աշխատակիցներին չի թույլատրվում Հաճախորդին որոշակի երաշխավորված եկամտաբերության մակարդակի խոստացումը: Ընդ որում, այս սահմանափակումը տարածվում է նաև Բանկի կողմից հրապարակվող և տարածվող տեղեկատվական նյութերի նկատմամբ:

10.5. Պատասխանատու աշխատակիցները պարտավոր են խիստ զգուշավորություն և աչալրջություն ցուցաբերել հանրային միջոցառումներում, զանգվածային լրատվության միջոցներում իրենց մասնագիտական գործունեությամբ պայմանավորված ելույթների, հոդվածների և մեկնաբանությունների տրամադրման ժամանակ:

10.6. Ներդրումային առաջարկությունը չպետք է շփոթության մեջ գցի օգտագործողներին: Պատասխանատու աշխատակիցները վերլուծական նյութերի մշակման ընթացքում պետք է իրականացնեն հետազոտության նյութերի բազմակողմանի ուսումնասիրություն, զերծ մնան վիճակագրական տվյալների ընտրանքային դրական վերլուծությունից և ներկայացումից, դիտավորյալ չշահարկեն առավել նպաստավոր փաստերը՝ համարժեք կարևորությամբ, սակայն «բացասական» բնույթ ունեցող և ռիսկ պարունակող փաստերի նկատմամբ:

10.7. Պատասխանատու աշխատակիցները պարտավոր են պահպանել հեղինակային և մտավոր սեփականության իրավունքները վերլուծական նյութերի մշակման ընթացքում: Անհրաժեշտության դեպքում, վերլուծական նյութերում կատարել համապատասխան հղումներ սկզբնաղբյուրներին և հեղինակների անուններին:

10.8. Պատասխանատու աշխատակցի կողմից Հաճախորդին տրամադրվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ գովազդային նյութերի տեղեկատվությունը) պետք է լինի պարզ, անկողմնակալ և չլինի ապակողմնորոշիչ:

10.9. Եթե Բանկն իր Հաճախորդին ներկայացնում է այնպիսի տեղեկատվություն, որում առանձնահատուկ շեշտադրվել է արժեթղթերից սպասվելիք օգուտները, ապա միաժամանակ պետք է ներկայացվի անկողմնակալ և աչքի ընկնող տեղեկատվություն, համապատասխան ռիսկերի վերաբերյալ:

10.10. Իրականացված վերլուծությունները, հետազոտությունները, դրանց վրա հիմնված եզրակացություններն ու առաջարկությունները պետք է հասկանալի լինեն ներդրումային բնագավառում միջին մակարդակի փորձ և գիտելիքներ ունեցող անձանց համար:

10.11. Իրականացված վերլուծությունները, հետազոտությունները, դրանց վրա հիմնված եզրակացություններն ու առաջարկությունները չպետք է ներկայացվեն այն ձևով, որ քողարկվեն կամ թաքցվեն կարևոր դրույթները, նախազգուշացումները կամ ակնարկները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի դրանց ոչ պատշաճ կարևորության առումով:

10.12 Այն դեպքում երբ, իրականացված վերլուծությունները, հետազոտությունները, դրանց վրա հիմնված եզրակացություններն ու առաջարկությունները պարունակում են համեմատություններ այլ անձանց կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների հետ, ապա.

- նման հայտարարությունները պետք է լինեն տեղին և իմաստալից, ներկայացվեն անկողմնակալ և հավասարակշռված ձևով;
- համեմատություններում պետք է ներառվեն դրանց կատարման համար հիմք հանդիսացող փաստերն ու ենթադրությունները;
- համեմատություններում պետք է նշվեն դրանց համար հիմք հանդիսացող տեղեկատվության աղբյուրները:

10.13 Այն դեպքում, երբ իրականացված վերլուծությունները, հետազոտությունները, դրանց վրա հիմնված եզրակացություններն ու առաջարկությունները պարունակում են դրույթներ ներդրումային ծառայությունների, արժեթղթերի կամ ֆինանսական ինդեքսի վերջին ժամանակներում դրսևորված վարքագծի կամ ցուցանիշների մասին, ապա.

- նման դրույթներն այլ դրույթների համեմատ չպետք է կրեն ավելի ընգծված կամ աչքի ընկնող բնույթ;
- նման տեղեկատվությունը պետք է ընդգրկի ներդրումային ծառայությունների կամ արժեթղթի դրսևորած վարքագիծը կամ ցուցանիշները վերջին հինգ տարիների համար (եթե նման տեղեկատվությունն ունի 5 տարուց պակաս պատմական վաղեմություն, ապա առավելագույն հնարավոր ժամկետով);
- պետք է հղումներ կատարվեն տեղեկատվության աղբյուրներին;
- նման տեղեկատվությունը պետք է պարունակի նախազգուշացնող դրույթ այն մասին, որ նախկինում ցուցաբերած վարքագիծը կամ ցուցանիշները չեն նշանակում, որ դրանք կշարունակվեն նաև ապագայում;

- եթե նման ցուցանշիները ընդհանրական են, մոտավոր կամ ունեն համախառն բնույթ, որից կախված վերջիններս չեն ներառում հարկերը, միջնորդավճարները կամ այլ վճարներով պայմանավորված գումարներ, ապա պետք է բացահայտվի այդ հանգամանքը:

10.14 Վերլուծական նյութերի պատշաճ որակի ապահովման համար, վերջիններս ենթակա են ստուգման պատասխանատու աշխատակիցների անմիջական ղեկավարի կողմից:

11. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների նկատմամբ ներկայացվող պահանջները ամրագրվում են Պայմանագրում՝ հիմնվելով Հաճախորդի հետ բանակցությունների ընթացքում ձեռք բերված փոխհամաձայնության վրա:

11.2. Եթե Պայմանագրով նախատեսված է հաշվետվությունների ներկայացման փուլային տարբերակ, ապա ներդրումային ծառայություններ մատուցող անձը Հաճախորդին է ներկայացնում հաշվետվությունն ըստ յուրաքանչյուր փուլի:

11.3. Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում պատասխանատու աշխատակիցների կողմից կատարված բոլոր ենթադրությունները պետք է ունենան միանշանակ մեկնաբանում, լինեն բավականաչափ հիմնավորված և հստակ ներկայացված:

11.4. Ելնելով Հաճախորդի պրոֆեսիոնալիզմի դասակարգման արդյուքից՝ պատասխանատու աշխատակցի կողմից ներկայացվող հաշվետվությունը կամ տեղեկատվությունը պետք է համապատասխանեցվի այնպիսի բովանդակությամբ, որը լինի Հաճախորդին ըմբռնելի մակարդակի:

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

12.2. Սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տաս) օր հետո:

12.3. Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

Հավելված 1

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈՐՁԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արժեթղթերը և նրանց առանձնահատկությունները

☐ Գերազանց ☐ Միջին

☐ Լավ ☐ Անբավարար

Արժեթղթերի հետ կապված ռիսկեր

☐ Գերազանց ☐ Միջին

☐ Լավ ☐ Անբավարար

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈՐՁԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գնահատեք ձեր փորձը արժեթղթերի բնագավառում

☐ Հարուստ ☐ Բավարար ☐ Կարճատև ☐ Փորձը բացակայում է

Գնահատեք ձեր փորձը ըստ արժեթղթերի տեսակների

	Հարուստ է	Բավարար է	Կարճատև	Բացակայում է
Բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր	☐	☐	☐	☐
Պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր	☐	☐	☐	☐
Ածանցյալ գործիքներ	☐	☐	☐	☐
Ինվեստիցիոն հիմնադրամի արժեթղթեր	☐	☐	☐	☐
Արժույթային պայմանագրեր	☐	☐	☐	☐
«Ռեպո» գործարքներ	☐	☐	☐	☐
Մուրհակներ	☐	☐	☐	☐
Արժեթղթերով փոխառություն և վարկավորում	☐	☐	☐	☐
Այլ գործարքներ	☐	☐	☐	☐

_____ *(Ա.Ա)*

Ստորագրություն *Ամսաթիվ*

ԲԱՆԿԻ ԴՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացված տեղեկությունների լիարժեքության և նրանցով գնահատականներ տալու վերաբերյալ

☐ **Ներկայացված տեղեկատվությունը բավարար է Հաճախորդին գնահատելու համար**

☐ **Ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ Հաճախորդին գնահատելու համար**

Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ՝ ներդրումային ծառայություններից և/կամ արժեթղթերից բխող ռիսկերը հասկանալու համար

☐ **Գիտելիքները և փորձը բավարար են**

☐ **Գիտելիքները և փորձը բավարար չեն**

_____ *(Ա.Ա)*

Ստորագրություն *Ամսաթիվ*

Հավելված 2

Տեղեկանք հաճախորդի ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին
Հաճախորդի անվանումը (անուն, նունը) _____ _/_____/20 թ.

1. Ներդրումային նպատակների վերաբերյալ

☐ երկարաժամկետ ներդրումներ
☐ կարճաժամկետ ներդրումներ
☐ իրացվելության կառավարում
☐այլ_____համառոտ նկարագրություն _____

2. Ֆինանսական գործիքներում ներդրումների վերաբերյալ

☐ բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր
☐ պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր, մուրհակներ
☐ ածանցյալ գործիքներ
☐ ներդրումային հիմնադրամի արժեթղթեր
☐ արժույթային պայմանագրեր
☐ ռեպո գործարքներ
☐ մուրհակներ
☐ արժեթղերով փոխառություն և վարկավորում
☐ այլ գործարքներ համառոտ նկարագրություն _____

3 Ներդրվող գումարի չափի վերաբերյալ

(ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով)

մինչև ☐ 50.000 ☐ 1.000.000 մինչև 10.000.000
☐ 50.000 մինչև 1.000.000 ☐ 10.000.000 և ավելին

4.1 Կանոնավոր եկամտի աղբյուրները, մեծությունը

☐ աշխատավարձ
☐ սեփական բիզնես
☐ այլ

4.2 Տարեկան կանոնավոր եկամտի

☐ մինչև 5.000.000 ՀՀ դրամ
☐ 5.000.000-ից 10.000.000 ՀՀ դրամ
☐ 10.000.000 ՀՀ դրամ և ավել

5. Տարեկան ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները,

☐ անշարժ գույք մինչև 10.000.000 ՀՀ դրամ ☐ շարժական գույք մինչև 10.000.000 ՀՀ դրամ
☐ անշարժ գույք 10.000.000 ՀՀ դրամ և ավել ☐ շարժական գույք 10.000.000 ՀՀ դրամ և ավել

6. Ֆինանսական ներդրումները և անշարժ գույքի մասին տեղեկություններ

☐ անշարժ գույքի նկատմամբ տնօրինման իրավունք
☐ անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունք

7. Տարեկան կանոնավոր ֆինանսական արտահոսքերը

☐ մինչև 10..000.000 ՀՀ դրամ
☐ 10.000.000 ՀՀ դրամ և ավել

8. Կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:

☐ բարձրագույն Մասնագիտության և զբաղմունքի նկարագիր_____
☐ ոչ բարձրագույն

_____ *(Ա.Ա)*
Ստորագրություն *Ամսաթիվ*

ԲԱՆԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացված տեղեկությունների լիարժեքության և նրանցով գնահատականներ տալու վերաբերյալ	Հաճախորդի ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների վերաբերյալ՝ ներդրումային ծառայություններից և/կամ արժեթղթերից բխող ռիսկերը հասկանալու համար
☐ Ներկայացված տեղեկատվությունը բավարար է հաճախորդին գնահատելու համար	☐ ֆինանսական վիճակը և ներդրումային նպատակները արժանահավատ են
☐ Ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ հաճախորդին գնահատելու համ	☐ ֆինանսական վիճակը և ներդրումային նպատակները արժանահավատ չեն

_____ *(Ա.Ա)*
Ստորագրություն *Ամսաթիվ*